առ քեզ , րէ գլ . 14 հմբ . վ , և վերացաւ
փառօք . 16 հմբ :

Աւրբաթ շրց րէկ , ստ . Օրհնեալ ար ան :

Ղաշու մեսե, ճժք. Սերձեսցին խնդր. Վիրք՝
 թ օրինաց, Քանզի երկիրն, ժա ԳԼ. 10 հմր.
 վ, ուղ խօսեցաւ ընդ ձեզ տր. 25 հմր. Վիրք՝
 յօբաց, | ուարուք, իա ԳԼ. վ, դադարին ոչ
 ինչ է. 34 հմր. Սրէրէ՝ ես, | ուարուք ինձ,
 խա ԳԼ. 3 հմր. վ, սքն իէլի. խէ ԳԼ. 4 հմր.:

Սղ՝ ձէ, Սոցեն աղօթք իմ. (լմն աստ :)

Ը աբաթ՝ յիշատակ է զազարու յարութէն:
 (Այսօր սկիւր ասել զհանգստեան շարական ՚ի պաշտաման
 ստեպարանին . և զինի՝ Աստուած անել : Այնպէս և
 զինի ողորմեայիցն ՚ի պապարագին) : ահ աձ, Այսօր
 Գողով . իւր սարօքն : Առաւօտու երգ՝ Տէր
 հաներ : Քարող՝ Փառաւորեսցուք : Սք աձ որ
 խաչեցար : Սղ՝ դի, ստ. (Յս միածին : Քարող՝
 վ ան խաղաղութէ : Աղօթք՝ Սք ես տր : Օ կնի
 աղօթիցն՝ սղ իթ, Տէր հաներ ՚ի : Փոխ՝ Քար-
 ձրր առնեմ : Առակ իմաս, իմաստութի զողո-
 քիչս իւր, ժ ԳԼ. 9 հմր. վ, զանուն քո սք.
 20 հմր. Առաքեալն՝ ա թես, Աչ կամիմ եղ-
 բարք, դ ԳԼ. 12 հմր. վ, բանիւքս այսօրիւք.
 17 հմր. : Ալէ, Ահան զիս, Աւետարան յօհ՝
 զէ, Աւ եր ոմն հիւանդ, ժա ԳԼ. վ, աշակեր-
 տօքն հանդերձ. 54 հմր. : Օ կնի՝ Հողաց : Տրն
 յետ ստեղծման : Քրղ՝ խնդրեսցուք : Աղօթք՝
 Քում ամենազօր և հրա :

Ղաշու ժամամուտ՝ Օ զազարու զննջու մն, և

Յորժամ եկեալ: Շ ինն՝ դձ, Որ 'ի յերկնից
 իջեր: Մէ՛ իմ, Տի՛ հաներ: Առակ, Լըկիւղ ան,
 ժիբ գլ. 27 հմր. վ, կորուսանէ զիմաստունս.
 35 հմր: Առքին՝ ան թես, Ոչ կամիմ եղբարբ,
 դի գլ. 12 հմր. վ, բանիւքս սյտոքիւք. 17 հմր:
 Ալէ, Լհան զիս: Աւետարան յօհ՝ զի, Լը էր
 մերձ զատիկն հրէ, ժան գլ. 55 հմր. վ, և հա-
 ւատային 'ի յս. ժիբ գլ. 11 հմր: Սրբասացու-
 թի՛ Վ անն յիշատակի Իսկ յերեկոյին՝ Խոնար-
 հեցո և Ապրեցո: Վ զուարթ: Վեսե, Գա-
 լըստեան: Բարող՝ Ասասցուք: Սք անձ՝ որ եկիր
 և գալոց: Լը զգեցցին միաբան բահանայքն՝
 և ելցեն յատեանն խաչիւ և աւետարանաւ՝
 խնկօք և մամեղինօք: Համբ՝ անձ, Որ վերօրհ.
 'ի սկսանիլն բացցեն զխորանն: Բիզ՝ խնդրես-
 ցուք: Ալ՝ թաղաւոր խաղաղութե՛:



Կանոն գալստեանն Բրիտանի Աստուծոյ Տերոյ յաւա-
 նակաւ յԵրոսաղէմ:

Օ ազկսզարդ կիւրակէ: Ի գիշերին հըս-
 կումն է, և դիցեն զսքբութիւնն
 'ի վր բազմոցին: Հետեւակ շիկն՝ դձ, թա-
 գաւոր գողով. (զլորսն 'ի Տիասին ասա): Օրհնութի
 անձ, Որ վերօրհնիս. (յապեանն ասա): Հարց

դի, Ար ՚ի քրորէական, Իւղաբերից աւտորն՝
զԹաղմանն միայն, ուղ ՚ի յանցեալ կիւրա-
կէս. և զկնի՝ Օւմ աւուրս կենաց իմոց :
Իսկ ՚ի Տր յերկնից շննին՝ զգեցցին միաբան
և ելցեն յատեանն խաչիւ և աւետորնաւ և
ւմ զարդուք : Առաւօտու երգ՝ Այսօր մտա-
նէ : Քր՝ Ասացուք : Աք ւմ՝ որ եկիր և գա-
լոց ես : Աքն՝ ւմ, Ար վերօրհնիս յա : Օ կնի
ւղ զէ, Ա երինք ցնծացեն : Փոխ՝ Օրհնե-
ցէք զտէր : Վիրք՝ երգ երգոց, Չայն եղ-
բօրորդւոյ իմոյ, ք գլ. 8 հմր. վ, անդ տաց
զստինս իմ քեզ. զ գլ. 11 հմր : Այս ՚ի յերգ
երգոցէն սասորսս և անսորսս է ժողովեալ) : Արդրէ՝
ես, Ասացէք դստեր սիօնի, կիք գլ. 11 հմր.
վ, և ոչ իքեալ. 12 հմր : Առաքին՝ եփես,
Օրհնեալ է ւմ, ւ գլ. 3 հմր, վ, յերկրի
ի նոյն. 10 հմր : Աէ, Օրհնեալ եկեալ ան-
ուամբ տն : Աւետորն մարկ՝ ճճ, Ալ գան
յերկրով. Մ գլ. 46 հմր. վ, երկօտասա-
նիւքն հանդերձ. Մ գլ. 11 հմր : Ալ տնա-
գրեսցեն զանդաստանն : Օ կնի Քարոզ՝ Աք
խաչիւս : Ալ՝ Պահպանիչ, Ալ երթայցեն ՚ի
գերեզմանն : յամտ՝ Յորժամ եկեալ : Ալ-
րական՝ դի, Յմ միածինն, Աճաճնի և խաչի՝
Փառք : Ալ՝ ճիթ, Չայնիւ. կց, Աղեցին ա-
կանջք քո : Փոխ՝ Ի խորոց կար : Աւտորն յօճ՝

դի, ԼԷ էր սմն հիւանդ, ժիւ գԼ. վ. զոր
արարն յս. 46 հմր: Օկնի՛ շողոցն հան
գուցեւոց: ԼԷ ապա սկսանիցին շիկն՝ բկ,
Լ. յօր ընդ հրակերպեան: Օկնի՛ Նորա
ստեղծեալ. (շէրիոսս սոաննն Ռայն սաս): Քիզ՛
Խնդրեսցուք: Լ՜ի՛ Քու՛մ ամենազոր:
Ղաշու ժմւո՛ Յնծա եէմ: Սի՛ Տէր թագա
ւորեաց: Շ իկն՛ դիկ, Լ՜նակիզըն: Սի՛ ղէ,
Լ էրինք ցնծասցեն: Փոխ՛ () րհնեցէք: Վերք՛
երգ երգոց, շամբուրեցէ զիս, ւս գԼ. վ.
ի կսկորդի իմում. բ գԼ. 3 հմր: Սարգրէ՛
զաք, Աւրախ լեր, լծ գԼ. 9 հմր. վ. սաշու
սրանեցէ նց. 15 հմր: Լ՜նքն՛ փիլիսոյ, Աւ
րախ լերուք, դ գԼ. 4 հմր. վ. և զմիտս ՚ի
քս յս. 7 հմր: Լ՜լէ, Տէր ւնծ մեր երեւե
ցաւ: Լ՜ւնրն մատ՛ մե, ԼԷ յեւանեւն նոցա,
ի գԼ. 29 հմր. վ. և անդ ագաւ. իւս գԼ.
17 հմր: Սրբասացութի՛ շրեշտակայինն է:
Իսկ յինն ժամուն՛ ժողովեցին ՚ի դուռն
եկեղեցւոյն. Սի՛ ղէ, Լ էրինք ցնծասցեն:
Լ՜նկ, Տէր ստացաւ զիս, ը գԼ. 22 հմր. վ.
յօրդիս մարդկան. 31 հմր: Սրգրէ՛ երեմ,
Շայեաց ընդ արեւելս, դ գԼ. 36 հմր. վ. և
փառք ւնծալաշտուե՛. ե գԼ. 4 հմր: Պետրոս՛
ւս կաթ, () րհնեալ է ւնծ, ւս գԼ. 3 հմր. վ.
զողոցն փրկուի. 9 հմր: Լ՜լէ, Տի՛ ՚ի տաճար:

Աւտորն զու՝ միջ, Այլ եղեւ իբրեւ մերձե-
ցաւ, ժիժ գլ. 29 հմբ. վ, զնմանէ ՚ի լսել.
48 հմբ : Այլցեն խաչիւ և աւտորնաւ և ամ
զարդուք ՚ի թափօր. և սկսանիցին շնին՝ ամ,
Ար վերօրհնիս. և յաւարտիլն՝ Արթիւ : Այլե-
տորն մասն՝ միջ, իբրեւ մօտ եղեն, իմ գլ.
վ, օրհնուի ՚ի բարձունս. 10 հմբ : Շ ըկան՝
ի՛ճ, թի՛ւր գոլով : Օ կնի՛ Արթիւ : Այլտորն
մար՝ ճժէ, Այլ յորժամ մերձ եղեն, ժիմ գլ.
վ, և փառք ՚ի բարձունս. 10 հմբ : Շ ըկն՝
ի՛ճ, Յորժամ եկն յս : Օ կնի՛ Արթիւ : Այլտորն
զու՝ միջ, Այլ առեալ զերկստասանսն, ժի
գլ. 31 հմբ. վ, յառաջ ելանել յե՛մ. ժիժ
գլ. 28 հմբ : Շ ըկն՝ ի՛ճ, Օ գալուստ քո քս
Օ կնի՛ Արթիւ : Այլետարան յօհ՝ ճ, ի վաղե-
անդր, ժի գլ. 12 հմբ. վ, որդի մարդոյ.
23 հմբ : Շ ըկն՝ ի՛ճ, ի յարուէ : Օ կնի՛ սղ
ի՛, Աշանեցաւ : Փոխ՝ ի կարդալ : Այլետորն
մասն՝ միջ, Օ ի ուղ փայլակն որ ելա, իի գլ.
27 հմբ. վ, և բանք իմ մի անցցեն. 35 հմբ.
Այլ անագրեացեն զանդաստանն : Վի՛ղ Ար
խաչիւս : Այլ Պահպանիչ : Այլ ապա եկեա-
ցեն ՚ի գաւիթն՝ փակեալ ունելով զդուռն
եկեղեցւոյն. սկսանիցին զխանարհեցոն ի ի
տուն, իսկ զԱպրեցոն ամ ամ փոխ, որպէս ե-
գեալքդ են, խանարհեցո տր, Պահեա զանձն

իմ: Ողորմեա ինձ տէր: Օ, ի դու ար: Աւնկն
դիր տէր: Յաւուր նեղութե: Շարին՝ թկ,
Աւրախ լեր. (Երեյս իրինեա:)

Ոչ որ է նման քեզ: Օ, ամ աղգս: Մեծ ես
դու տէր: Առաջնորդեա: Խոստովան եղէց
քեզ: Մեծ եղեւ մինչեւ: Շարական՝ թկ,
Խնդա յոյժ. (Երեյս իրինեա:)

Աստուած անօրէնք: Այլ դու տէր: Տուր
զօրութի: Տեսցեն ատելիք իմ: Շարական՝
թկ, Օ, ուարձացիր. (Երեյս իրինեա:)

Փառք հօր և: Այժմ և միշտ: Այլ ապա մաղ
թանք՝ Փառք քեզ ամ: Վրդ՝ Այլ եւս խաղա
ղութեան: Օրհնութիւն և փառք:

Այրեցո զիս տէր: Խորհեցան զա: Արեցին
զեզուս: Պահեա զիս տէր: Խորհեցան խա
փա: Այրս ձգեցին: Ասացի տէր ամ: Տէր ար
զօրութիւն: Մի մատներ զիս: Օ, ի մի եր
բէք: Արկցես ՚ի վերայ: Վարդոյ լեզ: Օ, ա
նեայ: Արդարք գոհացեն: Շարական՝ թկ,
Օ, բրիստոս թագաւորն. (Երեյս իրինեա:)

Տէր կարդացի: Ազիլ եղիցին: Վիր ար պա
հապան բերա: Ի պատճառել զպատ: Խրա
տեսցէ զիս: Արդեւն մերձ: Արպէս թանձ
րութի: Առ քեզ ար: Պահեա զիս յո: Անկցին
՚ի ցանցս: Շարին՝ թկ, Վնդ առ. (Երեյս իրինեա:)
Չայնիւ իմով: Միտեցից առաջի: Ի նուազել

յինէն : Հայէի յաջմէ : Աղաղակեցի առ : Աս-
 յեա Թր : Տր հան ՚ի բանտէ : Աւ քեզ սպա :
 Շարակն՝ թի , Սիաբանական . (երկոս կրկնեա :)
 Փառք հօր և որդւոյ : Այժմ և միշտ և յա :
 Սաղթանք . () րհնեալ Թր որ բնա : Սեսե ,
 Գալստեան : Սուրբ Թր՝ որ եկիր և գալոց ես :
 Հմբ՝ թի , Այսօր ընդ հրակերպ : Բնդ՝ Վասն
 խաղաղութե : Այժմ՝ Հայր գթած : () կնի հայր
 գթածին՝ զգեցցի մինն ՚ի պատուաւոր քա-
 հանայից , և եկեսցէ ՚ի դուռն եկեղեցւոյն ,
 և սկսանիցի բարձր ձայնիւ զՍաղմոսն՝ ճմէ ,
 () րհնեալ եկեալ : Փոխ՝ Խոստովան եղերուք
 մինչև ցայն տեղին որ ասէ՝ Բացէք ինձ զգը-
 րունս արդարուէ : Այլ սպա ասիցեն Շարկն՝
 թձ , Շնորհեա մեզ Թր : Այլ յաւարտիլն՝ սկը-
 սանիցի ասել զգեցե՛լ քահանայն աղիողորմ
 ձայնիւ . (չանդէ զկապարածի գալստեանն՝ և զբարաս-
 փանի առուրն ունի զԵրկոսրդ ,) Բաց մեզ տէր .
 բաց մեզ Թր . բաց մեզ տէր զդուռն ողոր-
 մութե . որ ողբալով կարդամք առ քեզ :

Այժմ ՚ի ոմն ՚ի չանանայիցն պարասխանեալ ՚ի ներ-
 քոսսս ասիցէ :

Այլ են սորա զի բացից . զի այս դուռն Թրն է ,
 և արդարք մտանենն ընդ սա :
 Այժմ չանանայն արբասքոսս ասիցէ :
 Այլ թէ միայն արդարք մտանենն , այլ և մեղա-

Լորք խոստովանութեամբ և սուգաշխարութի
արդարացեալք մտանեն ընդ սա :

Ի ներսոս ասիցէ : Օ ի սա է դուռն երկնից և
հովիտ տրամութե՛ զոր ուխտեաց ան յակո-
բայ . արդարոց հանգիստ . մեղաւորաց քա-
ւարան . քրիստոսի արքայարան . հրեշտակաց
բնակարան . սրբոց ժողովարան . տեղի ասպա-
ւինի և տուն աստուծոյ :

Քահանայն արքայոսս : Արժան և ճշմարիտ են
այդոքիկ զորս ասեսդ վն սբջ եկեղեցւոյս .
քանզի սա է մեղ մայր անարատ , և ՚ի սմա-
նէ ճնանիմք որդիք լուսոյ և ճշմարտութե՛ .
և սա է մեղ յոյս կենաց . և սովաւ գտա-
նեմք զփրկութի հոգւոց . և զի սա է մեղ
ճանասպարհ արդարութե՛ . և սովաւ ելա-
նեմք առ քն հայրն մեր երկնաւոր : Աւ ա-
ռասցեն Արսիան՝ բի , Իմաստուն կուսան-
քրն : Յոյս իմ : Անդք իմ :

Այս ասարպիլն՝ սխանիցի քահանայն արքայոսս :
Ի՛նց մեղ տէր . բայց մեղ տէր , բայց մեղ
տէր զդուռն ողորմութեան , որ ողբալով
կարդամք առ քեզ : Ի ներսոս ասիցէ : Ահա
տեսանեմք զտէրն մեր քն՝ որ բազմեալ կայ
՚ի վն սբջ սեղանոյն . և կոչէ առ ինքն զկա-
մարարս իւր , ասելով թէ՛ ուր ենն եմ , անդ
և սպաշտօնեայն իմ եղիցի : Քահանայն արքա-

Գիտաստ : Գին եմք անապական արեան որդ,
ւայն այ . ցնծու թի օրհնեսցուք զփրկիչն մեր
քն , և ասացուք ամբեան , փառք սոսկալի
գալստեան քում տէր : Հարական՝ բձ , թա-
գաւոր փառաց քեզ :

Օհիի չահանայն արքայոստաստ : Բայց մեզ տէր .
բայց մեզ տէր , բայց մեզ տէր զդուռն ողոր-
մու թե՛ , որ ողբալով կարդամք առ քեզ :

Ինէրչոստաստ : Փողն ահաւորին այ՝ ահագին
ձայնիւ գոչէ ասելով , ահա փեսայն գայ՝ ա-
րիք ընդ առաջ նորա :

Եւ չահանայն արքայոստաստ անիւ և դողոթնամբ ասա-
ցէ : Եհա ես և մանկունք իմ զորս ետ ինձ
ամ . կամք ամբն և ակն ունիմք տեսոյն քնի
և լսելոյ զերանաւէտ բարբառն նորա :

Ինէրչոստաստ : Չայն արարչին այ գոչէ ասելով .
եկայք օրհնեսալք հօր իմոյ՝ ժառանգեցէք
զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ՚ի ըս-
կզբանէ աշխարհի :

Եւ ասա չահանայն արքայոստաստ ասացէ : Բայցէք
ինձ զդրունս արդարութեան , զի մտից ընդ
այն և խոստովան եղէց տեառն :

Եւ բացցեն զդուռն , և ժողովուրդքն ամբն
մտցեն յեկեղեցին հոգեւոր ուրախութիւ :

Եւ սկսանիցին շարական՝ դի , Օղորմութե՛
քո զդուռն բաց : Եւ ասա՝ Արթիւ : Եւ ե-

տարան յօհ՝ Ճ, Ի վաղիւ անդր, ժբ գլ. 12
հմր, վ, զի փառաւորեսցի որդի մարդոյ .
23 հմր . (Օյս աւարանս Դբեմն կարո) :
Քարող՝ Խնդրես . կեցո : Այլ թագաւոր
խաղաղութեան :

Աւագ երկուշաբաթ : ան թձ, Անեղն Ի
հօրէ . իւր սարօքն : Առաւօտու երգ՝
Իսկզբանէ տէր : Փոխ՝ Արքա կորնչին : Քրող՝
Փառաւորեսցուք : Աբ ան՝ որ եկիր և գա-
լաց ես : Օ կնի մանկանցն , քրող՝ Այլ խաղա-
ղութե : Այլ Աբ ես տէր : Օ կնի ան՝ ճգ ,
ողբաձայն , Խոստովանութի և մեծվայելու-
թի : Փոխ՝ Օրհնեա անձն իմ զտէր : Անորն
մատ՝ մժգ , Եւ այդուցն իբրեւ , ին գլ. 18
հմր . վ, և սակաւք են ընտրեալք . իբ գլ.
14 հմր : Եւ զԱրարչական ասա ըստ սրաս-
շածին : Օ կնի քարող՝ Խնդրեսցուք . կեցո :
Այլ Քում՝ ամենազօր և հրաշալի գալստ :
Օ մաղթանքն եւս գալստեանն ասա մինչև
Ի յուրբաթ օրն : (Իսկ յայս երիս առաքա արեւ-
աճալից կանոն ոչ գոյ , և ոչ քեր ամենակալի , և ոչ
պապարագ մաքոսցանելոյ , և ոչ մեծ քարողից և օղբ-
իցն) : Այլն՝ զերեք օղորմեայսն ասասցես .
զկնի՝ Հանգստեան շարական , և Հոգւոց .
Իսկ ջերեկոյին՝ Խոնարհեցո և Ապրեցու Սե-

սեղի , Բերան արդարոյ : Փոխ՝ Սի նախան ,
ձիր : Գիրք՝ ճննդոց , Ի սկզբանէ արար անձ ,
ան ԳԼ . վ , ծառոյն կենաց , Գ ԳԼ . 24 հմր .
Առակ , Ղանաչել զխմաստութի . ան ԳԼ . վ , Ի
պարանոցի քում . 9 հմր : Սրբի՛ն՝ ես , Սը
խիթարեցէք , ին ԳԼ . վ , մնայ յաւիտեան .
8 հմր : Եւ ապա զԱղիղ եղիցին ասա : Քա
րող՝ Աղաչեցուք : Սք անձ՝ որ եկիր և : Հմր՝
քձ , Որ յանէից : Քիղ՝ Ս ասն խաղաղուէ :
Աղ՝ Հայր գթած : Սղ՝ կի՛ , Լ ուր մեզ : Փոխ՝
Քեզ վայելէ : Անորն մաս՝ մն , Իբրեւ ե
լանէր յն . ի ԳԼ . 17 հմր . վ , փոխանակ
բաղմաց . 28 հմր : Քիղ՝ Խնդրեցուք . կե
ցո : Աղ՝ Թափաւոր :

Աւագ երեքշաբթ : անձ քի , Իմաստուն
կուսանքն . իւր սարգին : Աւաւտու
երգ՝ Տարցին թագաւորի : Փոխ՝ Ածցին ցրն
ծութք : Սղ՝ ինչ , Տարցին թագաւորի : Փոխ՝
Իղիսեաց սիրտ իմ : Անորն մարկ՝ ճլ , Եւ
առաքեն առ նա զոմանս , ժք ԳԼ . 13 հմր .
վ , զկեանս իւր . 44 հմր : Արա՛ Արարչա
կան , և կեցո : Աղ՝ Քում ամենազօր և հը
րաշալի գալստեանդ :

Իսկ յերեկոյն՝ Խոնարհեցո և Ազրեցո :
Սեսե , Քաղցրութիւն արարեր : Փոխ՝ Քաղ

ցրբ ես դու ւոր : Վիրք՝ ճննդոց , Լլւ այս են
ճուռնդք , զլ գլ . 9 հմր . վ , որ է ՚ի վր երկրի
թ գլ . 17 հմր : Առակ , Ի մաստուր շինեաց ,
թ գլ . վ , սուգ տարածամ . ժ գլ . 6 հմր :
Սրբէ՛ ես , Լլւ ՚ի վր լերինդ , իս գլ . 9 հմր .
վ , համարեցան նմա . 17 հմր : Սք ւնձ՝ որ
եկիր և գայոց ես : Համբ՝ բձ , Շնորհեա
մեզ տէր : Օ կնի Հայր գթածին , սղ իդ ,
ողբածայն , (լմն ասա :) Առ քեզ տէր համ
բարձի : Լլւ յասելն՝ զգեցուցեն զտասն ման
կունն , և տացեն ՚ի ձեռս նոցին մովեղնս
վառեալս՝ յօրինակ տասն կուսանացն , որք
եկեալ կանգնեցին առաջի աւետարանին :
Աւետարան մատ՝ մխք , Լլւ ելեալ արտաքս ,
իդ գլ . վ , մատնի ՚ի խաչ ելանել . իդ գլ . 2
հմր : Քրդ Խնդրեցուք . կեցո : Աղ թա
գաւոր խաղաղութեան :

Աւագ չորեքշաբթ : ւնձ քձ , Որ յաթու
փառաց . իւր սարօքն , Առաւօտու երգ՝
խորհեցան և խօսե : Փոխ՝ Եդին յերկինս :
Սղ իս , ողբածայն , (լմն ասա :) Որ ուտէր
զհաց իմ : Փոխ՝ երանի որ խորհի զաղ : Աւե
տարան մար՝ ճճզ , Լլւ էր զաաիկ , ժդ գլ .
վ , մատնեցէ զնա . 11 հմր : Արարչական
բա : Քարող՝ Խդրեցուք , կեցո : Աղ Քում

ամենաողոր և հրաշալի գալատեանդ :

Իսկ յերեկոյին՝ Խոնարհեցո և Ապրեցո : Սե-
սեդի, Նայեաց և լուր : Փոխ՝ Սինչեւ յերբ
տէր : Վիրք՝ ծննդոց : Եւ երեւեցաւ նմա
աստուած, ժբ գլ. վ, դստերք նորա ընդ նը-
մա, ժթ գլ. 30 հմր : Առակ, Որդեակ մի
խարեոցեն, ւն գլ. 10 հմր՝ վ, զանձինս իւ-
րեանց աստակեն. 19 հմր : Սարգարէ՝ զա-
քա, Եւ ծանիցեն քանանացիքն, ժւն գլ.
11 հմր. վ, և ՚ի մէջ խորայելի. 14 համր :
Քարող՝ աղաչեսցուք : Սուրբ աստուած՝ որ
եկիր և գալոց ես : Հմր՝ քձ, Նոր սքանչե-
լիք : Օկնի Հայր գթածին, ւն իս, սղա-
ձայն, Ես ասացի տէր : Փոխ՝ Երանի որ :
Աւարն մատ՝ մհէ, Յայնժամ ժողովեցան,
իդ գլ. 3 հմր. վ, զի մատնեսցէ զնա նոցա.
16 հմր. Քրդ՝ Խնդրես. Կեցո : Աղ՝ Թագա-
ւոր խաղաղութեան :

Աւագ հինգշաբաթ : ւնհ քձ, Վերածգո-
ղն երկ, իւր սարօքն : Առաւօտու երգ՝
Որսացան : Փոխ՝ Եղեւ տէր ապա : Սկ՝ ւնկ,
Այսօր կանգնեցաւ. Քրդ՝ Վն խաղա : Աղ՝
Սք ես տէր : Սղ՝ դք, սղաւձայն, Որսացան :
Փոխ՝ Ած վրէժխն : Աւարն յօհ՝ ձէ, Բայց
այժմ անձն իմ խռովեալ է, ժբ գլ. 27. վ.

քան զփառսն ւայ . 43 հմր : Քնչ՝ Խնդ . Կե-
 ցս : Ան՝ Քում ամենազօր և հրաշալի գալս :
 Իսկ ՚ի յերրորդում ժամու՝ ժողովեսցին ՚ի
 դուռն եկեղեցւոյն վն արձակելոյ զապաշ-
 խարողսն . թէ իցէ և թէ ոչ՝ զկարգն կա-
 տարել պարտ է : Բայց նախ՝ () րհնեալ հո-
 գիդ նբ ւնձ ճշմարիտ : Ան՝ թիւ , Ողորմեա
 ինձ ւնձ : () րհնեմք զքեզ : Յամ ժամու :
 Եւ եւս խաղաղու : () րհնուի և ժառք հօր :
 Եւ ասա ՚ի վերայ սաղմոսարանին թիւ՝ գոր-
 զայս վեց :

Առաջին սաղմոս՝ ինչ . (ըմն ասս .) Առ քեզ տէր
 համբարձի զանձն իմ : Բաստ արա ինձ տէր
 զի ես յամբձ : Տէր լոյս իմ և կեանք իմ :
 Օ կնի՛ փառք հօր : այժմ և միշտ : Եւ եւս
 խաղաղուե՛ զտր աղա : () րհնուի և փառք :
 Արարէ , Առ քեզ տէր կարգացի : Աստուցէք
 տն որդիք ւայ , մա : Բարձր առնեմ զքեզ
 տէր զի ըն : Օ կնի՛ որպէս ՚ի վերայ :

Արարէ , Ի քեզ տէր յուսացայ՝ մի : Արանի
 ում թողուի եղեւ մե : Օ կնի՛ որպէս ՚ի վերայ :
 Չարարէ , Ան նախանձիր : Օ կնի՛ ուղ ՚ի վերայ :
 Հինգերորդ , Տն մի սրտմտուք : Ասացի թէ
 պահէ : Համբերելով համբե : Օ կնի՛ որ-
 պէս ՚ի վերայ :

Վեցերորդ , Արանի որ խոր : Ան լափաքի եղ

Ի՛նչ : Գառտ արա ինձ անձ : Օ կնի՛ ունի՛ ՚ի վերոյ :
 Եւ ապա աղօթք Յօնանու մարգարէին , Ի նեղու
 զուե՛ իմում , ք գլ . 3 հմր . վ , զուստ իմ՛
 ՚ի փրկութեան . 10 հմր : Օ կնի՛ Փառք հօր
 և որդւոյ . Այժմ՛ և միշտ :

Եւ ՚ի ծունկս անկեալ՝ սկսանիցին շիկն՝ զի ,
 ողբաձայն : Օ արհուրեալ դողացաւ . (երեք
 կրկնեա) : Օ կնի՛ Եւ եւս խա : Օրհնուի՛ և :
 Գարձեալ աղօթք Յօնանու մարգարէին , Ի
 նեղութեան իմում : Օ կնի՛ Փառք հօր . Այժ
 մ՛ և միշտ : Շ թկն՛ Քանզի կամաւ . (երեք
 անգամ) : Օ կնի՛ Եւ եւս խա : Օրհնուի՛ և :
 Գարձեալ աղօթք Յօնանու մարգարէին , Ի
 նեղութեան իմում : Օ կնի՛ Փառք հօր . Այժմ՛ և :
 Շ թկն՛ Արդ անկեալ . (երեք անգամ) :

Եւ ապա՝ Տէր ամենա : Օ կնի՛ Փառք հօր .
 Այժմ՛ և : Շ թկն՛ զի , Ամենակալ քաւ .
 (երեք անգամ) : Օ կնի՛ Տէր ամենա : Շ թկն՛
 Եւ զհողիդ սբ . (երեք անգամ) : Օ կնի՛ Տէր
 ամե : Շ արական՛ Եւ փրկեա զիս . (երեք անգամ)
 Արաչեմք և խնդրեմք : Եւ զկնի՛ քր՛ղ՝ Եկեալ
 քրս ՚ի խոստո : Այժ՛ Տէր անձ փրկուե՛ մերոյ :
 Եւ ապա սղ՛ ծ , ողբաձայն , Յօղեա յիս :
 Փոխ՝ Աղորմեա ինձ , Արգրէ՛ ես , Եւ կտրես
 ցին աւուրք սգոյ քոյ , կ գլ . 20 հմր . վ , ժու
 ղովեցից զնս . 22 հմր : Արգրէ՛ եզեկ , Այժմ՛

պէս ասէ տէր՝ և առից, լի գլ. 24 հմբ. վ,
անօրէնուէց ձերոց. 31 հմբ: Առքին՝ եբբ:
Ունիմք այսուհետեւ, ժ գլ. 19 հմբ. վ, այ
կենդանուոյ. 31 հմբ: Այլ խաւ, Ուր փափագի
եղջերու, (լման սաս): Աւարն զու՝ հի, Ա-
զաչէր զնա, է գլ. 36 հմբ. վ, երթ ՚իխա-
զազուի. 50 հմբ:

Աւ սարկաւագն քարոզեսցէ, Առիցէ տէր
ձայնի աղաչանաց մերոց. ամենակալ տէր ան-
մեր՝ կեցո և ողորմեա: Աւ ասա երեք ան-
գամ ար ողորմեա, և ասա կարգա զաղօթս
արջն բարսղի. Տէր ան հայր ամե: Օ կնի ա-
ղօթիցն, սղ՝ ճժէ, թիւ, ՚ացէք ինձ: Փոխ՝
խստական. մինչեւ ցայն տեղին յորում ասէ՝
՚ացէք ինձ: Աւ մտեալ յեկեղեցին սկա-
նիցին շնն՝ դի, Օ ողորմուէ քոյ զգուռն. և
ի յաւարտին, սղ՝ զթ, Աղաղակեցէք առ
տէր, (լման սաս): Օ կնի քիւ՝ Սուրբ եկեղե-
ցեաւս: Այլ ՚ մէջ տաճարիս: Աւ ասա ըն-
թեւնուցու եղանն կամ աւագ երէցն զաղօ-
թրս օրհնուէ ՚ի վր ասպաշխարոզաց: Օ կնի՝
քիւ՝ ՚նդրեսցուք: Աւ ասացէ երեսուն տէր
ողորմեա: Այլ ՚ Քում ամե:

Աւ դիցեն զսբ խաչն և զաւարնն առաջի
բեմին և համբուրեսցեն, և տացեն զչորեք
գրամեանն՝ զոր կարգեաց Սուխէս զեւտաց-

ւոցն : Եւ օրհնեսցէ քահանայն զապաշխարողսն , և արձակեսցէ :

Իսկ 'ի վեցերորդ ժամուն ժողովեսցին 'ի յեկեղեցին , ծածկեսցեն զսեղանն , և ասացեն զմնացեալ ողորմեայսն : Եւ ասասկ սանկցին Խոնարհեցո և Այրեցո : Սեսե , ին . Առացից սրբուք : Փոխ՝ Տէր՝ սիրեցի զվայելուի : Վիրք՝ ճնն , Եւ եղեւ յետ բա , իք գլ . վ , ըւար ձայնի իմում . 18 համար . Արդրէ՛ ես , Հողի ան 'ի վի իմ , կիւ գլ . վ , 'ի վի գլխոց նոցա . 7 հմր : Վործք առաքելոց , Եւ յաւուրսն յայնսօրի . ան գլ . 15 հմր . վ , մետասան առաքլսն . 26 հմր : Եւ ասա անձ ծի , ըստ ողորի ձայնիւ . Կակու զ էին : Փոխ՝ Անկնդիր ան : Եւ ետարան մար՝ ճծիք Եւ էր զատիկ , ժի , վ , 'ի լեառն ձիթեհեաց . 26 հմր : Եւ մինչ ընթեռնուն զսա , էլցէ սատարագիչն 'ի սեղանն , և զգետաւորեսցի , և քաղեսցէ զխորհուրդն մինչեւ 'ի հաւատամքն : Վի՛ղ՝ Աղաչեսցուք : Աք ան որ եկիր և գալոց ես : Հմք՝ անկ , Այսօր կանդնեցաւ : Վի՛ղ՝ Վի՛ս խաղաղութե՛ : Ա՛ղ՝ Հայր գթած : Օ կնի անձ իք , Պատրաստ արարեր : Փոխ՝ Տէր հովուեսցէ : Ելցեն գալիրքն զգետաւորեսալք և եկեսցեն առաջի սեղանոյն ,

և ընթերցցին զգիրքն : Առթին՝ անկորն , Օ ի
ընկալայ , ժամ գլ . 23 հմր . վ , դատասար-
տիցուք . 32 հմր : Ալէ , պատրաստ արարեր :
Անորն մար՝ մհր , և յառաջնում աւուր , ինչ
գլ . 17 հմր . վ , ՚ի լեառն ձիթենեաց . 30 հմր :
Ի սեղանն ընթերցուցուս արհասագն : Ապա բացցեն
զսեղանն , և ասացեն զՀաւատամքն : Ար-
բասացուի՛ Որ վերանտիս : Իսկ յորժամ
պատարագիչն հասանիցի յայն տեղին յու-
րում ասէ՛ Այլ տուր մեզ համարձակածայն ,
եղէ աւագ երէցն ՚ի բեմն՝ ունելով ՚ի ձե-
ռին զխաչն և զանորնն , և կարկառեցէ , զե-
կուցանելով ժողովրդեան զբան սրչն Իսրու-
ղի ՚ի լուր ամենեցուն : Ասի՛ ահացու-
ցիչ բանիւ , և ապա յորդորական ճննորհա-
տակելով՝ Աւարուք ինձ որդեակք իմ : Այլ
յաւարտիչն սկսանիցին Հայր մեր՝ բարձր
ձայնիւ : Իսկ յորժամ Քն պորգեալն վճարի-
ցի , ասացեն զպիրքն յորդորական ձայնիւ
զտաղս զայս , Ակայք մարդիկ միմ : Այլ ա-
պա հաղորդեցին արժանաւորքն , և արձա-
կեցին :

Իսկ յերեկոյին ժ ժամուն՝ ժողովեցին ՚ի
գաւիթ եկեղեցւոյն և կնորեցեն զկարգ
ոանալուային՝ զարարեալն սրչն Ափրեմի , և

զԹարգմանեալն Մեծին Գրիգորի վկայասիրի
հայոց հայրապետի : Բայց յառաջագոյն
պատրաստ ունելով զուրա խորհրդական լը-
ուացման, և դիցեն զսրբունին 'ի վր քաղմո-
ցին, և եկեացեն յատեանն զգետաւու-
րեալք, և սկսանիցին ողբաձայն սղ՝ Ճ, Յօ-
ղեա յիս : Փոխ՝ Ողորմեա ինձ անձ : Օ կնի՝
չքին՝ անկ, Այսօր կանգնեցաւ : Այլ յաւար-
տիլն՝ սրկւ գն քարոզեսցէ, Այլ եւս դսհուի :
Այլ ապա Ճ աէր ողորմեա, Թիւ : Այլ 'ի
վճարիլն՝ կարդացէ ետնն կամ քահանայն
զաղօթս զայս, Փառաւորեմք զքեզ, Այլ
ապա առեալ ջուր՝ արկցէ ի կոնքն խաչանման՝
ասելով ձայնիւ սղ՝ իյր, Չայն ան 'ի վր ջուրց :
Փոխ՝ Մատուցէք ան օրգիւք սյ, Գիրք՝ ելից,
Խօսեցաւ անր ընդ մովսէսի, ի գլ. 17 հմր .
վ, յետ նր . 21 հմր : Գիրք՝ դ Թագ, Այլ
արար քիրամ, է գլ. 38 հմր . վ, 'ի տանն
ան, 40 հմր : Գիրք՝ թ մնաց, Այլ արար սու-
ղման, դ գլ. 2 հմր . վ, զինքեանս, 6 հմր :
Արքրէ՝ ես, Ար երկնչիր ծառայ իմ յակօր,
խդ գլ. 2 հմր . վ, ան զօրուեց, 6 հմր : Արքլն՝
ան կօրն, Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, ժ
գլ. վ, եր ինքն քս . 4 հմր : Արքլն յօհ՝ ան
կաթու, Արեւիք սիրեացուք զմիմեանս, դ
գլ. 7 հմր . վ, և զեղբայր իւր, 21 հմր .

Եւ ապա զերանելոյն Յոհաննու վարդապետին զարարեալն բան վն սիրոյ զոր ասէ ,
Լ՛ծ սէր է : Եւ յաւարտիլն՝ Լ՛է, Պատրաստ
արարեր առաջի իմ . ()ծեր իւղով , Լ՛ւտրն
յոհ՝ ճժք , Յառաջագոյն , ժի՞ գլ . վ , ոչ աւ
մենեքին սբ էք . 11 հմր : Քի՞ լեզանակաւ ,
Լ՛ծ մեծ և սքանչելագործ : Օ կնի՛ Տաղ առա
քել վարդապետի : Եւ ՚ի վճարելն՝ սկսանիւ
ցին զաղօթս զայս ՚ի վերոյ իւղոյն և ջրոյն
ընթեռնուլ , Տէր մեր յս քս : Եւ յաւար
տիլն՝ անագրեսցեն խաչիւ և աւտրնաւ զիւ
ղն և զջուրն : Օ կնի՛ քի՞ Սբ խաչիւս : Լ՛ի՛
Պահպանիչ :

Եւ ապա զգեցուցեն զեղկպոսն կամ զմի
՚ի պատուաւոր քահանայից , որ առեալ ըզ
զենջակ նստցի ՚ի ծունկս՝ և լուացէ զոտս
ամենեցուն ՚ի մեծաց մինչև ցփոքունս : Եւ
այլ քն պար առեալ յայսկոյս և յայնկոյս՝ եր
գեսցեն զ՛՛ երաձդողն երկնից՝ քաղցր ձայնիւ ,
և զԼ՛ յօր անձառն : Իսկ լուացեալքն համ
բուրեսցեն զաւտրնն և զսբ խաչն և զաջ քա
հանային : Եւ զկնի լուացմանն՝ Արթիւ , Լ՛ւ
տրն յոհ՝ ճժէ , Եւ յորժամ լուաց , ժի՞ գլ .
12 հմր . վ . և դուք առնիջիք . 15 հմր : Եւ
յաւարտիլն՝ քի՞ ինդրեսցուք : Լ՛ի՛ թի՞ւր
խաղաղութեան :

Աւագ ուրբաթ. ՚ի գիշերին հսկումն է
և կատարումն ամ գրեւոյ :

Արանոնագլուխ՝ Դձ, () րհնեա անձն իմ զմոր :
Հետեւակ շիկն՝ Դձ, Այսօր ՚ի կատարումն :
Օ կնի՝ քրդ, Աւ եւս խաղա : () րհնութիւն
և փառք : () ւ ասրա լուցցեն երկատտան մու
մեղէնս ՚ի վր սեղանոյն յայսկոյս և յայնկոյս . և
մամեղէն մի մեծ ՚ի միջի : Աւ ասացեն երկու
քահանայք՝ Դ փոխ սղ :

Աւաջին սաղմոս՝ Թ, Անդէր խռովեցան : Տի՛ր զի
բազում : Ա կարգալ իմում : Աւ այլքն եղաւ
նակեացեն ձայնիւ :

Այլսանք ժողովրդոց ժողովեցան ՚ի միասին
վն ան և վն օժեւոյ նորա . (երեք անգամ կրկնե-
ցեն . Բայ շեփին Բարձր . Ի վէյ Կեղեան Ե--) :
Օ կնի՝ երգ ան Աերսէսի՝ ասացեալ յաղագս
մեծի ուրբաթու . Այսօր անձառ , մինչեւ
ցայն տեղին յորում ասէ՝ Ալից զօրէնան :
Աւ ՚ի վճարին՝ յաւագերիցու դասէն՝ Որ-
թիւ : Աւեաարան յո՛հ՝ ճժի՛, Ամէն ասեմ
ձեզ՝ ոչ է ծառայ մեծ , ժի՛ դԼ . 16 հմր . վ,
ինքն և աշակերտքն իւր . ժի՛ գԼ . 1 հմր : Ա-
զօթք հանդերձ ծունր դնելով զմոր աղա-
ւեսցուք . (երեք անգամ) : Աւ ՚ի վճարիւ ա

մէն մի աւետարանի՝ շիջուսցեն զերկուս
մամեղէնս, զմինն յաջմէ և զմինն յահեկէ՝
յերկոտասան մամեղինացն, ՚ի յետնոցն ըս-
կեսալ մինչեւ ջառաջինն :

Երբորդ սաղմոս՝ Խ, Երանի որ խորհի զազքա :
Ո՞ր փափաքի եղջերու : Դատ արա ինձ անձ :
Կց՝ ձայնիւ, Դան անօրէնուէ եղին ՚ի վր իմ :
Տէր տէր՝ մի թողուր զիս . (Երեք անգամ) :
Շարական՝ Լչից զօրէնան մովսեսի : Օ կնի՝
Որթիւ : Լւտրն զու՝ մի, Սերձեցաւ ամն
բազարջակերաց, իք գլ. վ. հայհոյուք խօ-
սէին ՚ի նա . 65 հմր : Լղօթք հանդերձ ծու-
նըր դնելով զտր աղա . (Երեք անգամ) :

Երբորդ սաղմոս՝ ծք, Փրկեա զիս ՚ի թշնամեաց :
Լծ մերժեցեր : Լուր ան աղօթից իմոց, Կց՝
ձայնիւ, Փրկեա զիս ՚ի թշնամեաց խնոց ան
խմ, և ՚ի հարածչաց իմոց ասրեցո զիս . (Երեք
անգամ) : Շ ինն՝ Խնամով սիրոյն : Օ կնի՝ Որ-
թիւ : Լւտրն մար՝ ձկք, Լւ ասէ ցնն յն,
ժիք գլ. 27 հմր . վ, և սկսաւ ըսլ . 72 հմր :
Չորրորդ սաղմոս՝ հք, Լծ մտին հեթանոսք : Որ
հովուեսդ : Յնծացէք առ անձ : Կց՝ ձայնիւ,
Նքա ՚ի ձեռանէ քումմէ մերժեցան . մեք
ժողովուրդք և խաչն արօտի քո . (Երեք անգամ) :
Շ ինն՝ Ղառապայթ : Օ կնի՝ Որթիւ : Լւե-
տրն մատ՝ մձէ, Յայնժամ ասէ ցնն յն, իք

գլ. 31 հմբ. վ, Թողին զնա և փախեն, 56 հմբ. Հինգերորդ սաղմոս՝ ճք, Ա՛ճ օրհնութե՛ խնոյ: Ասաց ասոր ցոր իմ: Խոստովան եղէց քեզ ասոր: Այ՛ ձայնիւ, Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ, և բանիւ ատելուէ զիս պաշարեցին. (Երեւանգամ): Շքին՝ Չար կապանաց: Օ, կնի՛ Որթիւ: Աւտորն մաս՝ յի, Իսկ նոյ կալեալ զյս, ինչ գլ. 57 հմբ, վ, ելաց դառնապէս. 75 հմբ:

Վեցերորդ սաղմոս՝ ճժէ, Խոստովան եղերուք ան զի բա. մինչեւ ցայն տեղին թէ՛ Քացէք ինձ զդուռնս: Այ՛ ձայնիւ, Խոստովան եղերուք ան զի բարի է, զի յաւիտեն է ողորմուի նոյ. (Երեւանգամ): Շքին՝ Տարածեալ Օ, կնի՛ Որթիւ: Աւտորն յոհ՝ ճժէ, Գիտեր և յուզա, ժք գլ. 2 հմբ. վ, և վաղվազակի հաւ խօսեցաւ. 27 հմբ: (Օ, այս ստեփանոս ՚ի բեմն ընթեանոցոն): Եւ ապա՛ Սաղթանք, Հոգւոցն հան, Քիզ՛ Վս հանգուցեալ հոգւոցն: Այ՛ Քս սրդի աս: Կանանազլուխ՝ Իջ խանք հալածեցին զիս. (ողբայայն): Օ, կնի՛ Եւ եւս խաղաղուէ: Օրհնուի և փառք հօր: Օրհնուի՛ քձ, Արծաթսիրուք. իւր սարօքն: Ալէ, Ալեր դու ՚ի կառս քո: Սասնեցայ և ոչ: Իսկ յորժամ ՚ի տէր յերկնից շնինն հասանիցի, Թագուոցեն զմի մեծ մնացեալ մա

մեղէնն , մինչեւ վճարեցի Փառք ՚ի բարւ
ձունսն , և ապա հանցեն : Առաւօտու երգ՝
Մատնեցոյ և ոչ ելանէի , աչք իմ : Աղաղա-
կեցի առ : Քնի՞ Փառաւորեացուք : Աք անձ՝
որ մատնեցար : Օ կնի Աք ես տէրին , սի՞ն
ճի՞ն , ըստ ողսգի . (Ղիթին լման ասա ողբայայն) :
Փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս : Փոխ՝
Աճ օրհնուէ իմոյ : Աւտորն յոհ՝ ճհի՞ն , Լու ա-
ծին զյս , ժի՞ն ԳԼ . 28 հմր . վ , զի ՚ի խաչ ե-
լանիցէ . ժի՞ն ԳԼ . 16 հմր : Լըրգ Չհանգուր-
ժեալ : Քարսզ՝ Խնդրեացուք . Կեցո : Ա՞յ
Քուամ ամենազօր և հրաշալի մատնութեդ :

Եւ ապա եդեալ զսբ խաչն և զաւտորնն ՚ի
վն Կրքակալին՝ և քահանայքն սրար առեալ ,
Եպիսկոպոսն կամ Աւագ քահանայն խնկար-
կեցէ . և այլքն սկսանիցին շնին՝ բի , Խաչի
քոյ քս երկիրսպագանեմք . և զսբ մատնութի-
քո մեծացուցանեմք . և զսբ չարչարանսդ
քո փառաւորեմք : Եկայք հաւատացեալք
երկրսպագեացուք քսի սոյ մերոյ . վն զի եկն
՚ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց սրարգեւս
աշխարհի : Աք անձ . սբ և հզօր . սբ և ան-
մահ՝ որ մատնեցար վասն մեր ողսրմեա մեզ .

(այսպէս ելեցա իրինելով .)

Եւ ապա՝ Փառք սբ խաչիդ , ալէլուիա . սբ

մատնութեանդ, ալէ. չարչարանացդ, ալէ :
 Եւ շանեցաւ, և այլն : Փառք սուրբ խաչիդ,
 և այլն նոյնպէս : Փառք և երկրպագութիւն
 հօր և որդ, և այլն : Փառք նբ խաչիդ, և
 այլն նոյնպէս : Եւ ապա յասան կենարար որ եզև
 մեզ փրկութի : Օ կնի՛ բնի՛ Սբ խաչիւս : Եւ
 Պահպանիչ : Եւ ապա ընթեռնուցուն զկը
 տակն մեծի սուրբութու՛ որ յաղագս խաչե
 րութեանն Քրիստոսի :

Եւ յօր Ի յերեկին՝ ծոնր կրկնելոյ հրաման ոչ գոյ, ֆին
 չե- յերեկոյի ժամն :

Եւ Ի յերեկեան երեք ժամուն՝ եկեալ ա
 սասցեն զերիս ողորմեայն հանդերձ մեծ քա
 րողիւքն և աղօթիւք : Օ կնի՛ Հոգւոցն հան :

Ի սկ Ի վեցերորդ ժմն ժողովեցին ի դու
 ոքն եկեղեցւոյն, և կնրեացեն զկարգ
 խաչերութեն : Սկանիցին ընթեռնուլ զութ
 փոխ սաղմասն, և զվեշտասան ընթեքցուածս
 գրոց, և զչորս գլուխ աւտրնան : Եւ ապին ըն
 թերցուածն՝ աշակերտի դասուն է :

Եւ աջին սաղմոս՝ Ըմ, (Ըմն սաս). Յարեան Ի վն
 իմ վկայք : Փոխ՝ Դասեա տր զայնո : Սրբրե՛
 զարար, Եւ ծանկոցեն քանանացիքն, ժմ գլ
 11 հմր. վ. և Ի մեջ ինլի. 14 հմր : Եւ բնին

գտող, Այլ ինձ քաւ լինցի պարծիլ, զի գլ. 14
հմր, վ. եղբարք ամէն, 18 հմր : Աղօթք հան-
դերձ սաղմոսելով զսր աղաչեսցուք. (Երէց
իրիւտ) : Օ կնի՛ Ալ եւս խաղաղութեան :
Օրհնութիւն և փառք :

Երրորդ սաղմոս՝ ԼԷ, (լման սսսս) . Այս ՚ի տան-
ջոնս պատրաստ եմ : Փոխ՝ Տէր՝ մի սրտմը-
տութեամբ քով յան : Արգրէ՛ ես, վասն
որոյ խոնարհեցան, ի գլ. 9 հմր, վ. տէր
զօրութեց . 15 հմր : Առթն՝ վիվիս, Օյն
խորհեցի, թ գլ. 5 հմր, վ. ՚ի փառս անց հօր .
11 հմր : Աղօթք հանդերձ սաղ. որպէս ՚ի վերոյ-
Երրորդ սաղմոս՝ ԼԸ, (լման սսսս) . Ստանեւ տե-
տանեւ զնան : Փոխ՝ Արանի որ խորհի : Ար-
գրէ՛ ես, Տէր ան տայ ինձ, ծ գլ. 4 հմր .
վ. ան է որ չարչարիցեն զիս . 9 հմր : Առթն՝
հռոմ, Օ ՚ի մինչդեռ տկարքս, Է գլ. 6 հմր .
վ. զհաշտութիւն իսկ ընկալար . 11 հմր :

Չորրորդ սաղմոս՝ ԽԹ, (լման սսսս) . Բաժանեցին
զհանդերձս : Փոխ՝ Աժ ան իմ նայեաց առ
իս : Արգրէ՛ ամուս, Ալ եղիցի յաւուր յայն-
միկ, Ը գլ. 9 հմր . վ. և մի գտցեն, 12 հմր :
Առթն՝ ան կորն, Օ ՚ի ճառ խաչին, ան գլ. 18
հմր . վ. ՚ի տէր պարծեսցի . 31 հմր :

Հինգերորդ սաղմոս՝ Լ, (լման սսսս) . Ի ձեռս քո
յանձն առնեմ : Փոխ՝ Ի բեզ տէր յուսացայ :

Սրբիքէ՛ Ես, Ահաւազիկ ՚ի միտ առցէ, Տի
գԼ. 13 հմբ. վ. մատնեցաւ. Տի գԼ. 12 հմբ.
Առթն՝ եբբ, Օ՛ի որ սրբէն, Ք գԼ. 11 հմբ.
վ. օգնական լինել. 18 հմբ. : Այլ ապա ըս-
կտանիցին երգ՝ Արրոգող տիեզէ : Աւերան
մատ՝ յժէ, Իբրեւ այգ եղեւ, իէ գԼ. վ. և
մայր որդւոցն զեբեթեայ. 56 հմբ. :

Վեցերորդ սաղմոս՝ կը, (Ընն սաս). Ատուն ՚ի
կերակուր ինձ լեզի : Փոխ՝ կեցո զիս ան :
(Այս գիրքս և աւերանս սատիւրիցոս Գասուն է) :
Սարգարէ՛ Ես, Իսկ այս ո՞վ է, կի գԼ. վ.
զնն յերկիր . 6 հմբ. : Առթն՝ եբբ, Այլ քի
եկեալ, ի գԼ. 11 հմբ. վ. հաւատովք ՚ի
փրկութիւն. 28 հմբ. : Արգ՝ Ատուն ըմպել :
Անրն մար՝ ճիւղ, Այլ փողփողակի ընդ առա,
ժէ գԼ. վ. եկեալ էին յեէմ. 41 հմբ. :
Աօնեերորդ սաղմոս՝ ճն, (Ընն սաս). Աղէ Ես
ոնք բու յաւերակի : Փոխ՝ Տի ըւր աղօթից
իմոց, աղաղակ իմ : Սրբիքէ՛ երեմ, Տեր ծա-
նո ինձ, ժն գԼ. 18 հմբ. վ. վն այնորիկ ա-
տեցի զնա . ժք գԼ. 8. հմբ. : Առթն՝ եբբ,
Անիմք այսուհետեւ, ի գԼ. 19 հմբ. վ.
՚ի ձեռս աստուծոյ կենդանւոյ . 31 հմբ. :
Արգ՝ Բարբառելով : Աւերն զու՝ մղէ, Այլ
իբրեւ այգ եղեւ, իք գԼ. 66 հմբ. վ. տե-
սանէին զայն . իգ գԼ. 49 հմբ. :

Ուրիշորդ աղմու՝ ճխք, (լման սաւ)։ Անձն իմ՝
ոնք երկիր ծա : Փոխ՝ Տէր լուր աղօթից իմոց,
ուն : Արդէրէ՛ զաքար, Ալ եկեացէ հասցէ,
ժոք գլ. 5 հմր. վ, եէմ՝ յուսով. 11 հմր. :
Արքին՝ ան տիմ, Պատուիրեմ քեզ, զ գլ. 13
հմր. վ, յաւխտեանս ամէն. 16 հմր. : Արգ՝
Աղբերացն : Աւտրն յոհ՝ ճղէ, Ալ նք առել,
ժիժ գլ. 17 հմր. վ, յոր խոցեցինն. 37 հմր. :
Ալ սպա շինն՝ թկ, Ասաչի քո քս, ըստ վեր-
նոց կանոնին. բայց աստ՝ զսբ չարչարանադ
քո մեծացուցանեմք, և զսբ խաչելու իդ քս
միււրեմք. և այն ըստ կարգին : Այնպէս,
Փառք սք խաչիդ, ալէ. չարչարանացդ, ալէ.
խաչելու էդ, ալէ. և այն սոն ՚ի վերն եդաւ :
Այրա շինն՝ թկ, Ասան կենարար : Օ կնի քիզ՝
Աք խաչիւս : Ալ Պահպանեա : Ալ համբու-
րեացեն զսբ խաչն և զաւտրնն և արձակեացին :

Ի՞սկ ՚ի տասներորդ ժամուն ժողովեալ ՚ի
յեկեղեցին՝ կատարեացեն զկարգ թաղ
մանն Քսի սոյ : Բայց նախ խոնարհեցո և
Այրեցո : Այս զուարթ : Աեսեդի՝ Ատուն
՚ի կերակուր : Փոխ՝ Աղիցին սեղանք նոցա :
Արդէրէ՛ երեմ, Տէր ծանոս ինձ, ժաւ գլ. 18
հմր. վ, ասեցի զնա. ժք գլ. 8 հմր. : Աար-
գարէ՛ ես, Ահաւաղիկ ՚ի միտ առցէ, ճք

գԼ 13 հմբ . վ , մատնեցաւ . ծիգ գԼ 12 հմբ :
Սիլ խս , (լմն սսս) . Բաժանեցին : Փոխ՝
Լճ ւծ իմ : Եւ ապա՝ Ուղիղ եղեցին : Քիչ
Ըղաչեցուք : Սուրբ ւծ՝ որ խաչե : բայց ՚ի
ծունկս անկեալ քահանայ քն և ժողովուրդ
քն . իսկ զՓնւորեալն մի ասիցեն : Հմբ՝
իկ , ստ , Եկայք հաւատացեալք : Օ կնի՝
Հայր գթածին՝ նղ ժէ կց , Օ ի ոչ թողցես
զանձն իմ ՚ի գժոխս : Փոխ՝ Պահեա զիս ւծ
իմ : Լնկ իմաս , Խորհեցան , թ գԼ . վ , սգ
ւոց անարատից . 22 հմբ . Սրբէրէ՛ զաքար ,
Եւ եղիցի յաւուր , ժք գԼ . 8 հմբ . վ . և
կանայք նց առանձինն . 14 հմբ : Լնքն պետ՝
ւ կաթ , Օ ի լաւ է բարեգործաց , ի գԼ .
17 հմբ . վ , երկայնմտութին . 20 հմբ : Լնէ .
Բնդ երեկոյս : Լնորն մատ՝ յսլ , Եւ իբրեւ ,
իէ գԼ . 57 հմբ . վ , հանդէպ գերեզմանին .
61 հմբ : Եւ ապա՝ Սք ւծ որ թաղեցար .
զփառաւորեալն եւս սաս : Օ կնի շնին թձ ,
Պարդեւատուն ւմյն , իւր սարօքն՝ նախա
տօնակ առնելով , զի թաղումն ւն է : Եւ
յաւարտիլն , քիչ ինդրես : Կեցո : Լն՝ Քում
ամենագոր և հրաշալի թաղմանդ : Եւ զի
ցեն զսուրբ . խաչն ՚ի վերայ սեղանայն՝ սա
տեալ սպիտակ գաստառակաւ ՚ի խորհւրդ
սրատանայն քնի : Եւ ասրս տար ատեալ

սկաննիցին շինն թի . Խաչի քո քն , ըստ վեր-
նոյ կանոնին . բայց աստ , զնք խաչելու թիդ .
քո մեծացուցանեմք . և զնք թաղումդ քո
փառաւորեմք : Աոյնպէս Փառք նք խաչիդ ,
ալէ . խաչելու եդ , ալէ . սքյ թաղմանդ , ալէ .
և սյն : Շ թին՝ թի , Խաչն կենարար : Օ կնի
քիդ՝ Աք խաչիւս աղաչեսցուք : Այ՛ Պահպա-
նիչ : Տաղ ողբաձայն . Ածածին կոյս մարիամ :

Աւագ շաբաթ : Ի գիշերին վառեսցեն
լոյս յաւագ խորանն միայն :

Կանոնագլուխ ըստ ձայնին : Իսկ յառաջ քան
զՕրհնութին՝ զմահու Պատեան յատեանն
ասա : Ին՛ թձ , Պարգեւատուն , իւր սարօքն :
Առաջին ալէ , Օ ի լցու շարչարանօք : Աղէ-
կս ոն՛ մարդ : Ադին զիս ՚ի գբի : Յիս հաս-
տատեցաւ : Առաւօտու երգ՝ Ադին զիս ՚ի
գբի : Փոխ՝ Յիս հաստատեցաւ : Քիդ՝ Փա-
ռաւորեսցուք : Աք Ին՛ որ թաղեցար : Օ կնի
Սանկանցն , քիդ՝ Վն խա : Այ՛ Աք ես տէր .
Այ՛ ձէ , ըստ սղոգի , Ադին զիս ՚ի գբի : Փոխ՝
Տէր Ին՛ փրկուե՛ իմոյ . (լմն ասա :) Աւեմբն
մատ՝ յձն , Աւ ՚ի վաղիւ անդր , իէ՛ գլ . 62
հմր . վ , հանդերձ զօրականօքն . 66 հմր :
Երգ՝ Տէրն յետ ստեղծմանն : Քիդ՝ Ինդր :
Այ՛ Քու՛ մամենագօր և հրաշալի թաղմանդ :

Եւ ապա շնին՝ թի, Խաչի քո քն, (ըստ երեւի
 յի կանոնին) . զնք խաչելու իդ . քո մեծացուցա-
 նեմք . և զնք թաղումդ . քո փառաւորեմք :
 Սոյնպէս՝ Փառք նք խաչիդ , ալէ . խաչելու
 թեանդ , ալէ . սրբոյ թաղմանդ , ալէ : Եւ
 համբուրեոցեն զնք խաչն և զաւտորնն : Վի՛ր
 Սուրբ խաչիւս : Եւ՛ Պահպանիչ :

Եւ յերեկոյի ճրտգալուցի սբյ Օլատիի
 իններորդ ժամուն՝ ժողովեացին ՚ի սբ
 եկեղեցին , ծածկեալ ունելով զսեղանն . և
 լուցցեն զերխ կանթեղս , և աստոյեն զերխ
 ողորմեայսն : Իսկ Խոնարհեցս և Եպրեցս
 ոչ գոյ : Սը՛ ճժք , ձայնիւ , յաջակողմեան
 դասէն , Եղիցի անունն ինն : Փոխ՝ Օրհնե-
 ցէք մանկունք : Օկնի շնին՝ քն , Եւ յսօր
 ինծուին զուարճանայ : Եւ յաւարտիլն՝ Եւ
 եւս խա : Օրհնուի և : Իարձեալ նը՛ ճժէ ,
 Եւ յսօր է զոր արար ինն : Փոխ՝ Խոստովան
 եղերուք ինն : Վիրք՝ ճննդոց , Իսկզսանէ ա-
 բար ինն , ին գլ . վ , ծառոյն կենաց . քն գլ .
 Չհմբ (Եղովք հանդերձ ճնրադրուք զնրազա-
 չեցուք . (երեք անգամ) : Օկնի՛ Եւ եւս խա :
 Օրհնուի և : Վիրք՝ ճննդոց , Եւ եղեւ յեա
 բանիցս , իք գլ . վ , լուար ձայնի իմում . 18
 հմբ : Եղովք հանդերձ : Վիրք՝ ելից , Եւ

Խօսեցաւ տէր , ժբ գլ . վ , մինչեւ ց յաւիտեան . 24 հմբ : Աղօթք հանդերձ ծնրագ : Սրբիբէ՛ յօնան , Եւ եղեւ բան օնն , ւն գլ . վ , և անասուն բազում . դ գլ . 11 հմբ : Աղօթք հանդերձ : Գիրք՝ ելից , Եւ եղեւ յառաւօտու պա , ժի գլ . 24 հմբ . վ , ընկէց ՚ի ծով . ժե գլ . 21 հմբ :

Եւ ապա լուցցեն ջահս և կանթեղս , և տացեն մոմեղէնս ՚ի ձեռս ամբողն . և եկե՛լ միաբան յատեանն՝ սկսանիցին շնին՝ դձ . Առսաւորեա եէմ : Օ կնի՛ Աղօթք հանդերձ : Սրբիբէ՛ ես , Առսաւորեաց , կ գլ . վ , փառաւորեցից . 13 հմբ : Աղօթք հանդերձ : Գիրք՝ յբայ , Ո՛վ է դա որ թագուցանէ , իք գլ . վ , ո՛ ծնաւ յերկինս . 29 հմբ : Աղօթք հանդերձ : Գիրք յետուայ , Եւ եղեւ յեա վախճանեւրցին , ւն գլ . վ , սւր և երթայցես . 9 հմբ : Աղօթք հանդերձ : Գիրք՝ դ թագ , Եւ եղեւ ՚ի վերացուցանել . իք գլ . վ , զոր խօսեցաւ . 22 հմբ : Աղօթք հանդերձ : Սրբիբէ՛ երեմ , Ահաւասիկ աւուրք , լւն գլ . 31 հմբ . վ , ոչ եւս յիշեցից . 34 հմբ : Աղօթք հանդերձ : Սրբիբէ՛ եղեկ , Եւ եղեւ ՚ի վերաց իմ , լե գլ . վ , և արարից ասէ տէր տէր .

14 հմբ : Աղօթք հանդերձ :

Եւ ապա ելլէ մինն ՚ի բեմն , և ՚ի վր բե-

մին ընթերցցի զՎանիէլի գիրքն, Յամին
 ութուտասաներորդի, քի գլ: Եւ յորժամ
 եկեսցէ յայն տունն յորում ասէ՝ ()րհնե-
 ցէք ամենայն գործք մն, սկսանիցին դպիր-
 քն երգել քաղցր ձայնիւ, ()րհնեցէք գու-
 վեցէք և բարձր սրարէք զնա յաւիտեան:
 վ, զի յաւիտեան է ողորմութիւն նորա. 90
 հմր: Եւ յաւարտին՝ բացցեն զտեղանն. և
 սրկէզն քարոզեսցէ բարձր ձայնիւ, ()րհ-
 նես տէր, և ժամարարն՝ ()րհնեալ թագա-
 ւորութիւնն հօր և որդ:

Ղաշու ժմւո՝ Քս յարեաւ ՚ի մե: Փոխ՝ Գու-
 վեա եէմ զիոր: Շ ինն՝ մծ, Յարեաւ քս ՚ի
 մեռելոց: Օ կնի՝ սարկաւազն ձայնեսցէ,
 Պաօսիսու մէ. և սկսանիցին ասել զուազ Սք
 մծն՝ որ յարեար ՚ի մեռելոց: Սի՛ կց, Քեզ
 վայելէ: Մքին՝ մ կորն, Յուցանեմ ձեզ եղ-
 քարք, մե գլ. վ. և դուք այսպէս հաւա-
 տացիք. 11 հմր: Եւ է, Յարեաւ մծ: Եւ ե-
 մրան մաս՝ յծք, Եւ յերեկոյի շա, իք գլ.
 վ, մինչեւ ՚ի կատարած աշխարհի. 20 հմր:
 Եւ ասպա հաւատամք ՚ի մի Եստուած = Սըր-
 բասացութիւնն՝ Սվ է որպէս տէր:

Եւ զկնի արձակման պատարագին՝ սկսանի-
 ցին նախատօնակ առնել անպատճառ: Շա-
 րահան մծ, Եւ յօր յարեաւ. իւր սարօքն:

Օ կնի քարոզ՝ Ինդրեցուք . կեցո՛ւ : Ա՛ն՝
Թագաւոր խաղաղութեան :

Եւ ապա երթեալ ՚ի սեղանն խաչիւ և աւետարանաւ սկսանիցին շարական՝ Խճ՝, Այսօր յարեալ : Եւ յաւարտին՝ Որթիւ : Աւետարան մատ՝ ԵՃ՝, Իսկ մետասան աշակերտքն, ինք գլ. 16 հմր . վ, մինչեւ ՚ի կատարած աշխարհի . 20 հմր : Քարոզ՝ Սուրբ խաչիւս : Ա՛ն՝ Պահպանիչ : Հայր մեր որ յերկինս :





Յարեաւ. Աստուած եւ. ցրուէցան ամէ.
նոյն թշնամիք նորա:



Կանոն Յարութեան փեսոսն Տերոյ Յիսուսի Վրիսարսի :

Օ առկի կիւրակէ : Ի գիշերին հսկու մն է .
 և գիցեն զարբութիւն ՚ի վն բազմոցին
 յատեանն : Կանոնագլուխ՝ անձ , Վատեա
 տր զայ : Եւ զգեցցին միաբան քահանայքն
 և եկեացեն յատեանն , և սկսանիցին անձ անձ ,
 Ըստօր յարեաւ : Հարց զի , Ըստօր մեծ աւ
 ւեաթիք , իւր սարօքն : Իւ զաքերից աւեաթն
 յոհ՝ յեաթին փոխն է , Եւ ՚ի միաշաբաթոցն ,
 ի գլ . վ , զայս ինչ ասաց ցնա . 18 հմբ : (Յայս
 յինանցս Կիւրակեից՝ Իւ զաքերից աւեաթան՝ երեք
 գլոյ յեաթին իրին կարդա . և զմաքիւնսինն՝ ըման) :
 Իսկ յորժամ զՏէր յերկնիցի յեաթին տունն
 առացեն , անքն համբուրեացեն զմիմեանս
 ասելով՝ Չեզ և մեզ մեծ աւեաթիք , Վն յա
 րեաւ ՚ի մեռելոց : Եւ զ՝ Օ յարուի : Վարսզ
 Ըստացուք : Սք անձ՝ որ յարեար ՚ի մեռելոց :
 (Մինչև ՚ի Համբարձումն երգ ետորբ աստուածն առաինս :
 Եւ զգեցցին միաբան քահանայքն՝ և ելցեն
 ՚ի թախոր խաչիւ և աւեաթնաւ , խնկօք և

մամեղինօք և ամ զարդուք, ասելով շնկան՝
ամ, Այսօր յարեաւ : Սի կիք, Քեզ վայե :
Գործք, Օբանն անջին, ամ գլ. վ, երկրի .
8 հմբ : Ալէ, Հասեալ կային : Աւտորն մար,
միւ, Եւ ընդ առաւօսն, ժիլ գլ. 2 հմբ, վ,
զի երկնչէին . 8 հմբ :

Եւ ապա ասացեն շնկան, և ընթեռնու-
ցուն զչորեսին աւետարանն գէս ՚ի չորս
կողմունսն աշխարհի :

Առաջին շնկան՝ ամ, Բնդ լուսանալ. գէս
՚ի յարեւել : Արթիւ, Աւտորն յոհ մզ, Յեա
այսորիկ, ժիթ գլ. 38 հմբ . վ, եղին զյս .
42 հմբ : Գէս յարեւմտեան կողմն ասելով
շնկն՝ ամ, Առաքեցար ՚ի հօրէ : Աւտորն զու-
յիբ . և ահա այր մի, իք գլ. 50 հմբ . վ,
վասն պատուիրանին . 56 հմբ :

Գէս ՚ի հարաւային կողմն ասելով շնկն՝ բձ,
Ի գերեզման քո : Աւտորն մար՝ միէ, Եւ իբ-
րեւ երեկոյ եղեւ, ժե գլ. 42 հմբ . վ, ե-
կեսցեն և օճցեն զնա, ժիլ գլ. 1 հմբ :

Եւ գէս ՚ի հիւսիսային կողմն ասելով շնկան՝
բկ, Քո յարուէդ : Աւտորան մաս՝ յիսի, Եւ
իբրեւ երեկոյ եղեւ, իէ գլ. 57 հմբ . վ,
հանդերձ զօրականօքն . 66 հմբ :

Եւ ապա եկեսցեն յասեանն՝ ասելով շնկն՝
ամ, Ար զանարատ բազուկս : Օկնի սղիք :

Նշանեցաւ : Փոխ՝ Ի կարգալ : Աւտորն յո՛հ՝
ճղի, Յայնժամ ետ զնա, ժի՛ծ գլ. 16 հմր .
վ, զոր ինչ գրեցի գրեցի . 22 հմր : Քրի՛զ՝ Վս
ի վերուստ : Աւ տնագրեցեն զանդաստա,
նրն : Քրի՛զ՝ Սք խաչիւս : Ա՛յ՛ Պահպանիչ :
Աւ ապա սկսանիցին ժմւտ՝ Քանզի յարեւ :
Շրի՛ն՝ դի, Յս միածինն . Ա՛ծածնի և խաչի
փառք : Ս՛յ՛ ճի՛ծ . Ազիցին ահանջք քո : Փոխ՝
Ի խորոց կարգացի : Աւտորն յո՛հ՝ զի՛, Աւ էր
ոմն հիւանդ , ժա՛ գլ. վ, զոր արարն յս . 46
հմր : Ապա ասացեն զՀոգւոցն . և զկնի
երգ՝ Նորաստեղ . (լման ասա) : Քրի՛զ՝ Խնդրես :
Ա՛յ՛ Քու՛մ ամենազօր և հրաշալի յարու :
Աւ ապա եղեալ զսք խաչն և զաւտորնն ՚ի
վերայ գրքակալին՝ երկիրպագցեն ամբն . և
այլքն սրար առեալ եղանակեցեն շրի՛ն՝ թի,
Խաչի քո քս՝ ըստ վերնոց կարգին . բայց ասա,
և զսք թազումնդ քո մեծացուցանեմք , և
զսք յարուիդ քո փառաւորեմք : Նոյնպէս ,
Փառք սք խաչիդ , ալէ . սք թազմանդ , ալ
լէ . և այն ըստ կարգին : Աւ եկեալ թ թ ,
համբուրեցեն զսք խաչն և զաւետարանն ,
և ասացեն միմեանց՝ Քս յարեաւ ՚ի մեռել
լոց , ձեզ և մեզ մեծ աւետիս : Օ կնի քրի՛զ՝
Սուրբ խաչիւս : Ա՛յ՛ Պահպանեա :
Նաչու ժմւտ՝ Քս յարեաւ . (այս շաբաթիս ժա

Ընտանիքն այս է) : Փոխ՝ Գովեա եէ՛մ զտէր :
Շ թին՝ ւնձ , Յարեաւ Քրիստոս ՚ի մեռելոց :



Այսօր սկիզբն արա Սաղմոսին Երանեալէն , և յամէն օր
7 7 փոխ ասա , որ մինչև ՚ի Հոգւոյ գալուստն՝ ութ կա-
նոնն վճարեսցի , զատ ՚ի յուր զօր զայիցն որք ոչ են Գաւթի :



Ղաշու ւնձ՝ առաջին փոխ , Լըրանեալ է :
Ընդէր խռովեցան : Տէր զի բազում : Գործք
առաքելոց , Լը յաւուրն յայնսօրիկ , ւն գլ .
15 հմր . վ , ընդ մետասան առաքեալն . 26
հմր : Ըլէ . ւնձ ճիսթ , ձայնիւ . (ըման ասա) .
Գովեա եէ՛մ : Ըլեւորն մար՝ մլն , Լը ընդ
առաւօտս , ժիլ գլ . 2 հմր . վ , զի երկնչէին ,
8 հմր : Արբասացութիւնն , Ս՞վ է սնլ տէր .
(այս յինանցս սրբասացութիւնն այս է) :

Իսկ եթէ կամիցիս վերաբերելով առնել ,
զոր խորհուրդն յայլում սեզանի դիր : Լը
յորժամ քահանայն ասէ՝ Տր ւնձ օրհնեսցէ
զամենե . դու զՍաղմոս ասացէքն և զուուր
Արբասացութիւնն՝ նախապէս ասա յուրդոր .
նայնպէս և զՍի որ երեսայիցն , և զՍարմին
տէրունահանն : Ըստ գնացեալ առ այն սե-
զանն ուր նր խորհուրդն է , և սարկաւա
դունքն գոչեսցեն բարձր ձայնիւ , Յարեաւ
եհար զխորան իւր : Գովիքն երգեսցեն , Լը

ցնծայ նա սիղ հսկայ : Այլա սարկաւագացն
պար առեալ՝ երգեսցեն քաղցր ձայնիւ , զԱբբ
զբրովբէիցն , և այլն ըստ կարգին :

Լսկ ՚ի տասներորդ ժամուն ժողովեալ ՚ի
յեկեղեցին՝ սկսանիցին սաղմոս կի՛ք ,
Վեզ վայելէ : Գործք , Օբանն առաջին . 10
գլ . վ , ՚ի ծագս երկրի . 8 հմբ : Ալէ , Գու
յարուցեալ : Աւտորն դու՛ յլի՛թ , Ալ ահա եր
կուք , ի՞ք գլ . 13 հմբ . վ , ՚ի բեկանել հա
ցին . 35 համար :

Ալ ելցեն խաչիւ և աւտորնաւ խնկօք և մու
մեղինօք և ամ զարդուք ՚ի թափօր , ասելով
չիկն՝ ամ , Այսօր զատիկ մեր : Օկնի՛ Ար
թիւ : Աւտորն յոհ՝ մի՛թ , և ՚ի միաշաբաթօջն
ի՛ գլ . վ , և զայս ինչ սասց ցնա . 18 համբ :
Ալ սկսանիցին չիկն հանգստեան՝ ամ , Ար
անձառ տնօ : Օկնի սիղ՝ ճի՛թ , ձայնիւ , Ի
խորոց կարգացի : Աւտորն յոհ՝ խա՛ , Ամէն ա
մէն ասեմ ձեզ , է՛ գլ . 24 հմբ . վ , որ առա
քեացն զիս . 30 հմբ : Երկն՝ ամ , Այ խաչն
օգնական : Այ՛ ք , Աշանեցաւ : Փօսի՛ Ի կար
գալ : Աւտորն յոհ՝ մե՛ , Իսկ հրէայքն , ժի՛թ
գլ . 31 հմբ . վ , յոր խոցեցինն . 37 հմբ :
Ալ տնագրեօցեն զանդաստանն : Վի՛ք՝ Այ
խաչիւս : Այ՛ Պահպանիչ : Օկնի քարոզեսցէ

օտրկաւազն , Եւ եւս խա : Օրհնուի ե :
 Եւ ապա խոնարհեցո ե Ապրեցո : Մեսեդ ,
 Տէր կարող . Տնն է երկիր : Հմբ՝ ան , Բնդ
 լուսանալ , Արձակման սղ՝ ճխէ , ձայնիւ ,
 Գովեա եղէմ : Անորն յոհ՝ մծիք , ե էր ե-
 րեկոյ , ի գլ . 19 հմբ . վ , ոչ հաւատամ . 35
 հմբ : Քնդ՝ Խնդրես . Կեցո : Ան՝ Թաղաւոր
 խաղաղութեան :

Արկուշաբաթ օրն մեռելոց է : (Յայս շաբա-
 թիս Օրհնութեան՝ զարո-թեան Տէր յերկնիցան ասա
 Դայնէն , զինի հոգոյ Գալստեանն , ե այն ըստ կարգին) :
 ան , անկ , Առաքեցար ի հօրէ : Հարց հան-
 դըստեան՝ ան , Օրհնեալ ես դու քն , իւր
 սարգին : Եւ այն ան յարուէ է : Քնդ՝ Ա-
 սասցուք : Առաւօտու սղ՝ կիք , Քեզ վայելէ :
 Անորն զու՝ յԱն , Բայց ի միաշաբաթուն ,
 իդ գլ . վ , Թէ զինչ եղեւ , 12 հմբ : Քնդ՝
 Խնդրես . Կեցո : Ան՝ Քուսմ սմենազօր ե հը-
 բաշալի յարուէդ : (Յայս յինանցս՝ յառաօտուն
 ե յերեկոյնի՝ Կեցո ասա , Բայց զԱրարչութեան երգն
 մ՝ ասեր , այլ զԼորաստեղծեալն ասա ի կիրակեկն) :
 Ճաշու սղ՝ դ , Ի կարդալ ի մում , Բանից
 իմոց : Տէր մի սրամտուք : Գործք , Աքք խ-
 բայելացիք , ք գլ . 22 հմբ . վ , իրրեւ երեք
 հաղարք . 41 հմբ : Ալէ , սղ՝ ճխէ , Գովեա
 եէմ , Անորն զու՝ յԱն , Բայց ի միաշաբա-

Թուն, իդ 41. վ, Թէ զննչ եղեւ. 12 հմբ :
Յերեկոյնն առաջինն սն իդ, Վեզ վայե :
Մետարան մար՝ միւ, Լու ընդ առաւօտս .
44 41. 2 հմբ. վ, զի երկնչէին. 8 հմբ. Սե-
սե, Մթոռ քո սն. Ռդսեաց սիրտ իմ. Հմբ
սն, Մաքեցար ՚ի հօրէ : Մրձակմանն սն
ձխէ, Վալեա եէմ. Մեթրն զու՝ յիւ. Ռայց
՚ի միաշարթուն, իդ 41. վ, Թէ զննչ ե-
ղեւ, 12 հմբ :

Երեքշարթ սն քձ, Ռ գերեզման քո : Հից
սն, Պայծառացիր : Մաւօտու սն է, Տէր
ոն զինու : Փոխ՝ Ռանից իմց. (Ման տոս) :
Մետարան զու՝ յիւ, Լու ահա երկուք, իդ
41. 13 հմբ. վ, ՚ի բեկանեւ հացին. 35 հմբ :
Ղաշու սն է. Տէր սն իմ. Տէր տր մեր զի.
Վոհացայց : Վորձք, Լու էին հանապազոր-
դեալք, ք 41. 42 հմբ. վ, մարգարէից. 44
41. 21 հմբ : Մէ, սն է, Տէր ՚ի զօրուծէ.
(Ման տոս). Մետարան զու՝ յիւ, Լու ահա
երկուք, իդ 41. 13 հմբ. վ, ՚ի բեկանեւ հա-
ցին. 35 համար :

Յերեկոյնն, առաջինն սն է, տր ոն զին, Մեթրն
զու՝ յիւ. Ռայց ՚ի միաշարթուն, իդ 41. վ, Թէ
զննչ եղև. 12 հմբ : Սեսե, Տէր թիւրից ցնձաս.
Երեկոյնն վայ : Հմբ՝ քձ, Ռ գերեզման քո :
Մրձակմանն սն է, Տէր ՚ի զօրուծէ. (Ման տոս) :

Աւտօրան զու՛ յլլԹ, Աւ ահա երկուք, իդ՛
գլ. 13 հմբ. վ, Իբեկանել հացին. 35 հմբ. :
Չորեքշաբաթ՝ ան թկ, Քո յարուե՛գ : Հից՛
անձ, (Օրհնեալ ես ար անձ : Աղ՛ ճխէ, Գու
վեա եէ՛մ : Աւտօրն զու՛ յիս, Աինչդեռ զայն
խօսեին, իդ՛ գլ. 36 համար. վ, զձեռնն և
զուսն. 40 համար :

Ղաշու սղ՛ Ժ, Ի ար յուսացայ : Ապրեցո զիս
ար : Աինչեւ յերբ : Գործք, Աստեա ասաց
ցհարսն, դ՛ գլ. 22 հմբ. վ, արով արժան
իցէ կեալ մեզ. դ՛ գլ. 12 հմբ. : (Հայս՛ վայ
րի սխանիցին ընկեանու և զիստիկեայսն) : Կա
թուղիկեայց յակորու, Յակորու սց. ան գլ.
վ, սիրելեաց իւրոց. 12 հմբ. : Ալէ, Քեզ վա
յելէ Աւտօրն զու՛ յիս, Աինչդեռ զայն խօ
սեին, իդ՛ գլ. 36 հմբ. վ, զձեռնն և զու
սըն. 40 համար :

Յերեկոյին առաջին սղ՛ ճխէ, Գովեա եէ՛մ :
Աւտօրն զու՛ յլլԹ, Աւ ահա երկուք, իդ՛ գլ.
13 հմբ. վ, Իբեկանել հացին. 35 հմբ. :
Աեսե. Արգեցէք ան. Ատէք առա : Հմբ՛
թկ, Քո յարուե՛գ : Արձակման սղ՛ կդ՛,
Քեզ վայելէ անձ : Աւտօրն զու՛ յիս, Աինչդեռ.
իդ՛ գլ. 36 հմբ. վ, և զուսն, 40 հմբ. :
Աինչշաբաթ՝ ան դ՛, Իւղարեր և սուրբ :
Հից՛ անձ, Ինչ երիս մանկուանն : Անուսու

սո՞ղ զի, Բարձր արարէք : Փոխ՝ Տէր թագաւորեաց :
Լուսն մատ՝ ի՞նչ, Լուսնեալ զժուր
զուրգան, Ե՛ գլ. վ, քան զձեզ էին . 12 հմբ :
Նաշու սո՞ղ ժի՞, Լուսն անգամն : Տէր՝ սո՞ղ
կացցէ : Պահեա զիս : Գործք Հայեցեալ ՚ի
համարձակութիւն, Ի՛ գլ. 13 հմբ . վ, համար-
ձակութ . 31 հմբ : Սո՞ղ զի, բարձր արարէք :
Կաթու՛ յակոր, Ս՚ի որ որ ՚ի փորձութե՛ն,
սո՞ գլ. 13 հմբ . վ, պահել զանձն յաշխարհ
հէ . 27 հմբ : Լուսն, Տէր սո՞ղ կացցէ : Լուսնն
մատ՝ ի՞նչ, Լուսնեալ, Ե՛ գլ. վ, քան ըզ-
ձեզ էին . 12 հմբ : Յերեկոյին առաջին սո՞ղ
Բարձր արարէք : Փոխ՝ Տէր թագաւորեաց՝
բարկա : Լուսնն զու՛ յիս, Սինչգեռ զայն,
ի՞նչ գլ. 36 հմբ . վ, զձեռսն և զոտսն . 40
հմբ : Սեւե, Լկայք և տեսէք . Լ՛ մեր ա-
պա : Հմբ՝ Ի՛նչ, Իւղարեր և : Լրձակման
սո՞ղ ժի՞, Տէր սո՞ղ կացցէ : Լուսնն մատ՝ ի՞նչ,
Լուսնեալ, Ե՛ գլ. վ, քան զձեզ էին . 12 հմբ :
Սրբաթ՛ ան Ի՛նչ, Յարեաւ տէրն : Հից՝
անձ, Լոյս որ ՚ի հրեղէն : Լուսնու սո՞ղ
զի՛, Տեսին անձ : Փոխ՝ Օրհնեցէք զսր : Լու-
սնեալ յո՛՛՛ մթն, Յետ սյուրիկ, Ի՛նչ գլ. վ,
յարուցեալ ՚ի մեռելոց . 14 հմբ :
Նաշու սո՞ղ ժի՞, Լուսն տէր : Սրեցից զքեզ
սր զօ : Լրկինք պատմեն : Գործք, Լուսն

մուծի, 7 4Լ, 32 հմբ. վ, որք լուայն զայն
է 4Լ. 11 հմբ: Սղ զէ, Տեսին ամ: Կաթու
յակոր, Լղբարք իմ մի աչառուծք, ք 4Լ.
վ, առ դատաստանաւ. 13 հմբ: Լէ, սղ
ղբ, Տէր թագաւորեաց՝ վայելուծի: Լե
տարան յոհ՝ մծիծ, Յետ այսորիկ, իմ 4Լ.
վ, յարուցեալ ՚ի մեռելոց. 14 հմբ:
Յերեկոյի առաջին սղ զէ, Տեսին ամ: Լ
ետարան մատ՝ իդ, Լե տեսալ, է 4Լ. վ,
քան զձեզ էին. 12 հմբ: Սեսե, Լծ մեր
յեր. Յելանելն: Հմբ՝ դկ, Յարեաւ տէրն:
Լրձակման սղ զբ, Տէր թագաւորեաց վա:
Լետարան յոհ՝ մծիծ, Յետ այսորիկ, իմ
4Լ. վ, յարուցեալ ՚ի մեռելոց. 14 համար:
Երաթ յիշատակ է գլխատման սրյն Յով
հաննու Սկրտչին: ամ՝ դձ, Փառարանակից:
Հրց՝ ամձ, Նախայաւիտեան, իւր սարօքն. և
ամ ինչ յարուէ է: Լռաւօտու սղ ձք, Լծ
իտաւորեալ է: Փոխ՝ Օղորմուխ քո: Լ
ռակ, Օձեղ աղաչեմ, ք 4Լ. 4 համբ. վ,
չարժէ զնա. 11 հմբ: Սարգրէ՝ ես, Չայն
բարբառոյ, ին 4Լ. 3 հմբ. վ, մնայ յաւի
տեան. 8 հմբ: Սրգրէ՝ մաղաք, Լյսպէս
ատէ տէր. և ահա ես, 7 4Լ. 4 համբ. վ,
հրամանս և զիրաւունս. 6 հմբ: Գործք, Լլ
իբրեւ ինոյր, Ժի 4Լ. 25 հմբ. վ, յարուցել

դիտուս . 33 հմբ : Ալէ , Վու մանուկ մար-
գարէ : Աւորն մար՝ ծէ , Աւ լուաւ արքայ .
Չ գլ . 14 հմբ . վ , և եղին ՚ի գերեզմանի . 29
հմբ : Քիզ՝ Խնդրեսցուք . կեցո : Այ՛ Քու՛մ
ամենազօր և հրաշա :

Ղաշու ժմւա՛ Քս յարեաւ : Այ՛ ժ՛թ , Ա յուիցե-
քեզ . Տէր ՚ի զօրսւն : Ա՛ծ ամ իմ : Վորձք , Աւ
՚ի ձեռս առաքելոցն , է գլ . 12 հմբ , վ , սպա-
նանել զնս . 33 հմբ : Այ՛ կի՛լ , Ա՛ծ ողորմեսց :
կաթու՛ յակոր , Օ ինչ օգուտ իցէ , թ գլ .
14 հմբ . վ , մեռեալ են . 26 հմբ : Ալէ , սի՛ ձ ,
Յնձացէք առ ամ . (լմն սսս) : Աւետարան
յո՛հ՝ միէ , Աւ իբրև ճաշէ , իս գլ . 15 հմբ վ .
որ թէ գրեալ էին . 25 հմբ :

Յերեկոցին առաջին սի՛ Ա՛ծ ողորմեսց մեզ . և
արձակմանն , Յնձացէք առ ամ . (Անկե-
ի Համբարձոմն շաբաթ երեկոցեան սաղմոսն սոսա են) :
Աւորն յո՛հ՝ միէ , Յետ այսորիկ , իս գլ . վ .
յարուցեալ ՚ի մեռելոց . 14 հմբ : Այս զու-
Աես . գալստեան . Օրհնեալ եկեալ . Տէր
ամ մեր : Այ՛ ամ՝ որ եկիր և գա : Հմբ՛ ամ , Այ
վերօրհնիս : Արձակման սի՛ ձ , Յնձացէք առ
ամ : Աւորն յո՛հ՝ միէ , Աւ իբրև ճաշեցին , իս
գլ . 15 հմբ . վ , որ թէ գրեալ էին . 25 հմբ :
Քիզ՝ Խնդ . կեցո : Այ՛ Քու՛մ ամենա :

Կանոն Աւետեաց սրբոսկաց կոստին Մարիամոս :

Սուրբ անձանի Մեծտեաց տօնն աստ եղաւ ,
 որ կատա ի յապրիլի է : Մայց յերեկոցին՝
 որ է ապրիլի 4, յբուժ աւուր և պատահիցի,
 յետ աւուր պատճէին՝ Մա տօնակ արա :
 Շրին, անկ, Խորհուրդն անձառ, իւր սարո :
 Օկնի բնդ՝ Սք զանձանին : Մի Մեկալ տէր :
 Իսկ ի գիշերին՝ որ է ապրիլի է, զգեցցին մի
 արան քահանայքն և եկեցցեն յատեանն, և
 սկանիցին ան անկ, Խորհուրդն անձառ, իւր
 սարօքն : Մէ, Օննգեան : Մաւօտու երգ՝
 Իջէ ոն զանձրե : Մի Մայր սք : Սք անձ լաս
 կարգի աւուրն : Օկնի սք կէ, Տէր տացէ
 զբան ոյք : Փոխ՝ Յարիցէ ան : Միքք՝ երգ եր
 գոց, Համբուրեցէ, ան գլ. վ, Ընկալցի ըզ
 քեզ . 11 հմր : Մաակ, Ի պաղոց արգարուէ,
 ժան գլ. 30 հմր . վ, պսակ է առն իւրուժ .
 ժք գլ. 4 հմր : Միքքէ՝ ես, Մյսպէս ասէ ան
 իրրե, ծք գլ. 7 հմր . վ, գիրկու թի ան մերոց .
 10 հմր : Մարդարէ՝ զաքար, Ինդա և ուրախ
 լեր, ը գլ. 10 հմր . վ, սքց իւրոց . 13 հմր :
 Միքքէ՝ մաղար, Մյսպէս ասէ ան, ահա ես,
 4 գլ. վ, յայանուէ նք . 2 հմր : Մքն ը կոյ,

Ապարէն դուք, ի գլ. 16 հմբ. վ, ահիւն այ.
է գլ. Աէ, Հողին սբ եկես, Աւարն դու՛ ան,
Եւ յամսեանն, ան գլ. 26 հմբ. վ, ՚ի նմանէ
հրեշտակն. 38 հմբ. Վարող Խնդրեացուք.

Կեցո՛ւ Աղօթք՝ Քու՛մ ամենա՛ :

Եւ եթէ ՚ի պահոց կիւրակէն հանդիպիցի,
զՆորաստեղծեալի բ տունն ասա՛ : Իսկ եթէ
յայլ աւուրն՝ զԱրարչութեան երգն ասա՛.

և զկնի՛ Օ՛ւստեալ խորհուրդն ծա՛ :

Ճաշու ժմա՛ Ա՛ծածին անհարա՛ Փոխ՛ Ա՛ծա՛
ցուցէ՛ : Հարկն՝ ի կ, Ա՛ծածին խորան՛ : Ա՛յ,
Վիրք և Ա՛ւտարան՝ առաւօտեանն է՛ : Ա՛յ,
Ա՛ւրախ լեր բերկ՛ : Արբատացու՛ Վաղմու՛նն է՛ :
Իսկ թէ ՚ի ծաղկազարդի հանդիպիցի, կամ
յաւաղ հինգշաբաթին, կամ յաւաղ ուր
բաթին, կամ ՚ի շաբաթին, և կամ ՚ի դաս
կին, յառաջ քան զՕրհնութիւն՝ զխորհուրդն
անձառն քաղեա իւր սարօքն, և ասպա զգիրքն
և զաւետարանն կարդա՛ : Օ՛ կնի քարող՛ Ա՛յ
զմծածինն : Ա՛ղօթք՝ Ի՛նկալ տէր՛ : Եւ ասպա
սկսիք զաւուր պատշաճն՛ :

Եւ թէ յաւուր զաղարու շաբաթին, կամ
յաւաղ երկու շաբաթին, յերեքշաբաթին, և
կամ ՚ի չորեքշաբաթին հանդիպիցի, յառաջ
քան զՕրհնութիւնն՝ ՚ի տեղի պաշտման շա
բահանին, զաւուր Օրհնութիւնն հանդերձ

իւր սարօքն քաղեա . զաւուր Վիրք և զԱւե-
տարանն կարդա . գերզն Ներսէսի և զՀո-
գւոցն ասա . Եւ ապա սկսիր զտօն Աւե-
տեացն կատարել , ասելով () րհնութիւն ,
զխորհուրդն անձառն ըստ կարգին , և զայն
Սոյնպէս արա և եթէ յինանցն հանդիպիցի :
Իայց զաւուր աւետարանն յետ աւետեաց
գրքոյն և աւետարանին կարդա . ապա Վեցո-
Նոյնպէս և թէ յաշխարհամաստրան Վիւրա-
հէին պատահիցի , զկնի աւետեաց աւետա-
րանին զՎիրք և զԱւետարանն անդատանին
կարդա և անդատան արա . և ապա զաւուր
ուետօրնն , և Նորաստեղծեալ և Վեցո- Իսկ
'ի ճաշուն և յերեկոյին՝ Սաղմոսք , Վիրք և
Աւետարանք յարութե են . իսկ Համբարձին՝
'ի շաբաթ երեկոյսն զՎաղստեանն ասա ,
և յայլ աւուրսն՝ զԱւետեացն , հանդերձ
Սայրսուրբիւն :



Նոր կիւրակէ . (որ և ասի Կրկնաշարի) : Ի
գիշերին հսկումն է :

Իրաննադրուխ , () րհնեա անձն իմ . Փոխ () րհ-
նեցեց զբեզ գոհութք . (որպէս 'ի բոան բարե-
լէնդանի գիշերն) : Թհ՝ զի , Նորագեալ կղզիք ,

իւր սարօք : զԱ՛ւագ () րհնութի՛ն զհետ աստ :
Առաւօտու սը՛ ձի՛ , Յոյց մեզ տէր : Փոխ՛
Հաճեցար տը ընդ երկիր քո . (Սի՛նչ ՚ի Համ-
Բարխոմն աստօտանն սաղմոնն այս է) : Ա՛ւետարան
զուկ՛ թէ՛ , Ա՛ւ դարձաւ յս , ի՛ ԳԼ . 14 հմր .
վ , ընդ մէջ նոցա գնայր . 30 հմր : Օ կնի՛՝ Ար-
րաստեղծեալ : Քի՛զ՛ ինդրես : Կեցո՛ : Աղօթք՛
Քու՛մ ամենա :

Ճաշու ժմւո՛՝ Քս յարեաւ . (Սի՛նչ ՚ի Համբար-
խոմն՛ յաթնն իտրալիէի և ՚ի Հաբակի՛ շիւրիսոս յար-
եանն աստ . իսկ ՚ի Տիտոս աստօտան՛ զԱ՛հասորն և ըզ-
Քանիչ յարեանն) : Աղ՛ ի՛ք , Տէր հովուեսցէ :
Տեսան է երկիր : Առ քեզ տէր համբարձի :
Գործք , Յարուցեալ սմն , է՛ ԳԼ . 7 հմր : Աղ՛
կի՛ , Քեզ վայելէ : Կաթու՛ յակոր , Ա՛ի բա-
զում վարդապետք , ի՛ ԳԼ . վ , Զուր քաղցր
առնել . 12 հմր : Ա՛լէ , սը՛ ճխէ՛ , Գովեա եհմ :
Ա՛ւտրն յոհ՛ ս , ՚ի սկզբանէ էր բանն , ս՛ ԳԼ .
վ , ՚ի ձեռն յսի քսի եղեն . 17 հմր :

